

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2015թ-ին «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ում կատարված աշխատանքների

2015թ.-ին «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ում կատարվել են պահպանության, անտառտնտեսական և գիտական աշխատանքներ, որոնք համապատասխանում են Նախարարության կողմից հաստատված դրամաշնորհի պայմանագրի և աշխատանքային ծրագրի դրույթներին:

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի բոլոր ստորաբաժանումներում իրականացվել են պահպանության աշխատանքներ, որի ընթացքում ««Ջրվեժ»» անտառապարկում գրանցվել է ապօրինի արածեցման 3 և հրդեհի 1 դեպք, ինչը բացահայտելու և հետագա խախտումները կանխելու համար տեղեկացվել է ոստիկանությանը, բնապահպանական տեսչությանը և տեղական ինքնակառավարման մարմիններին:

Ստեփանավանի ««Սոճուտ»», Իջևանի, Բերդի ««Սորաններ»», Վանաձորի ««Ժ. Սարուխանյանի անվան»» դենդրոպարկերում և ««Ջրվեժ»» անտառապարկում ձմռանը ձյան տեղումներից հետո մաքրվել են ճանապարհները, մշտադալար ծառերը և թփերը ձյան ծարրությունից չկտրվելու համար թափ են տրվել: Կատարվել են վաղ գարնանային սանիտարական մաքրման աշխատանքներ, հավաքված և կուտակված թափուկները դուրս են բերվել տարածքներից: Այցելուների շրջանում իրականացվել են էկոկրթական և ճանաչողական աշխատանքներ: Կատարվել են անտառապաթուղգիական ուսումնասիրություններ:

««Էրեբունի»» արգելոցում իրականացված պահպանության աշխատանքներում ռեժիմի խախտման դեպք չի գրանցվել: Ձյան հալոցքից հետո հավաքվել են քամու բերած կենցաղային աղբի մնացորդները: Իրականացվել են հակահրդեհային միջոցառումներ, ստեղծվել է 4կմ երկարությամբ հանքայնացված շերտ, կուտակվել է ջրի պաշար: Հրդեհավտանգ շրջանում պահպանությունը կատարվել է խստացված ռեժիմով:

««Որդան կարմիր»» արգելավայրում պահպանության և ռեժիմի խախտման դեպք չի արձանագրվել: Արագափի տեղամասում մաքրվել են սահմանային

առուներն ու ամրացվել են ափերը: Որդանախոտին ճնշող բուսատեսակները մաքրվել են առավել խիտ տարածված տարածքներից և դուրս են բերվել: Ջրառատի տեղամասում՝ գյուղատնտեսական շուկային հարակից հատվածներում, կենցաղային աղբի մաքրման և տարածքից դուրս բերման աշխատանքներ են կատարվել: Թարմացվել են ցուցանակները, հրդեհավտանգ և ապօրինի արածեցման առավել վտանգավոր շրջանում պահպանությունը իրականացվել է խստացված ռեժիմով:

Ստեփանավանի <<Սոճուտ>> դենդրոպարկում ձյան տեղումներից հետո մաքրվել են ջերմատան ապակիները ձյունից, իսկ ջերմատան հողում բավարար քանակով խոնավություն պահպանելու համար ներկրվել ու տարածվել է ձյուն: Ուժեղ քամիներից թեքված ծառերը ամրացվել են: Նախապատրաստվել են 27 պիտակներ, թարմացվել են գրառումները և փակցվել: Գազոնները մաքրվել են թափուկից: Ջերմատան հողը փոխելու համար այլ վայրերից տեղափոխվել է հող, նախապատրաստվել և ներկրվել է ջերմատուն: Հողագնդով հանվել են շուրջ 1839 տնկիներ, կազմակերպվել է դրանց վաճառքը: Էտվել և ձևավորվել են 80 հատ առանձնյակ ծառեր և թփեր: Բացվել են ավելի քան 3000 հատ վարդերի արմատավզիկները՝ լրացվել 140 հատ թփերով, որոնք էտվել և պարարտացվել են, իսկ աշնանը կատարվել է էտի և բուկլիցի աշխատանքները: Հավաքվել է էտված թափուկը և մաքրվել տարածքը: Կատարվել է քաղհան-փխրեցման և մշակման բոլոր աշխատանքները չորս անգամ: Իրականացվել է քիմիական պայքարի աշխատանքներ: Կանաչ ցանկապատերը (բորոյուրներ) խուզվել են, իսկ ցրտահարված, չորացած առանձնյակները հանվել և լրացվել են 960 հատ մահոնիայի սերմնաբույսերով: Ծաղկանոցներում կատարվել է քաղհան-փխրեցում, իսկ աշնանը մաքրվել են ծաղկաբույսերի չորացած մասերը ու կատարվել է բուկլից: Շուրջ 4000 գ.ծ.մ. երկարությամբ 0.8 հա մակերեսով ճանապարհների խոտաբույսերը հեռացվել են, եզրագծերը ուղղվել և ներկրված ավազով հարթեցվել, իսկ ճանապարհամերձ հատվածները հերբիցիտով մշակվել են: Ճանապարհամերձ հատվածները հերբիցիտով մշակվել են: Տնկարանում կատարվել է պարարտացում, իսկ շուրջ 900 գծմ երկարությամբ առուները մաքրվել և խորացվել են: Տնկարանի դպրոց հողամաս են տեղափոխվել 343 հատ վարդի արմատակալներ, 640 հատ կեչու սերմնաբույսեր, 800 հատ տոսախի, 920 հատ չմենու և 120 հատ հորտենզիայի

արմատակալ կտրոններ: Աշնանը կատարվել է եղևնու տնկանյութի խմբավորման աշխատանքները: Տնկարանում կատարվել է քաղիան-փխրեցում, քիմիական պայքարի աշխատանքներ սնկային հիվանդությունների դեմ, իսկ ջերմատանը քաղիանը կատարվել է 20 օրը մեկ անգամ և ոռոգվել: Գարնանը մաքրվել, ներկվել են նստարանները և տեղադրվել տարածքում, իսկ աշնանը հանվել և տեղափոխվել ծածկի տակ: Հնձվել են գազոնները՝ 4 անգամ 0.75 հա մակերեսով և բացատային հատվածների խոտաբույսերը 6000 ք.մ., ինչը հավաքվել է և տարածքից դուրս է բերվել: Իրականացվել են անտառապաշտպանական աշխատանքներ՝ քիմիական պայքար մշտադալար ծառատեսակների մոտ նկատված վնասատուների դեմ: Հանվել և պահեստավորվել են ծաղկաբույսերի սերմերը և սոխուկները, հավաքվել է 8 կգ խոտաբուսի սերմեր գազոնի վնասված հատվածները վերականգնելու համար: Տնկվել է 20 կգ հանված, մշակված վարդակակաչի սոխուկները: Հավաքվել և մշակվել է եղևնի փշոտ տեսակի սերմնանյութ: Տարածքի տերևային մնացորդները հավաքվել և նախապատրաստվել է բուսահող ստանալու համար:

Իջևանի դենդրոպարկի վարձակալված հատվածում կատարվել է վաղ գարնանային մաքրման, ճանապարհների նորոգման, էտի, ձևավորման, լրացման, արմատային մացառների հեռացման, ոռոգման և խնամքի մյուս աշխատանքներ վարձակալի կողմից:

Դենդրոպարկի մնացած 5,7 հա հատվածում իրականացվել են ճյուղերով ցանկապատի ստեղծման աշխատանքներ շուրջ 720 գծմ երկարությամբ: Կատարվել է 300 գծմ երկարությամբ առուների մաքրում, տնկվել է 246 հատ կաղնի փոփոխական և 46 մայրի հիմալայան տեսակի տնկիներ: Տարածքից հավաքվել են լրացման աշխատանքներ կատարելու նպատակով փոսերի փորման ժամանակ դուրս եկաց քարերը: Տնկարանի դպրոց հողամասի 200 քմ տարածքը ձեռքով փորվել է, հեռացվել է արմատային մացառները ու տարածքից դուրս է բերվել: Տնկվել է 1000 հատ կաղնու սերմնաբույսեր: Տնկարանում կատարվել է ոռոգման, քաղիան-փխրեցման աշխատանքներ: Հակահրդեհային նպատակով հնձվել է շուրջ երեք հեկտար տարածքի խոտաբույսերը, որը հետագայում հավաքվել և տարածքից դուրս է բերվել: Նոր տնկված բույսերը դրսևորվել են շաբաթական մեկ անգամ:

Կատարվել են անտառապաթոլոգիական ուսումնասիրություններ և կատարել մեխանիկական և քիմիական պայքարի աշխատանքներ վարակված օջախներում:

Բերդի <<Սորաններ>> դենդրոպարկում մաքրման աշխատանքներին զուգընթաց իրականացվել է չոր ճյուղերի և արմատային մացառների էտի աշխատանքներ, հավաքված 5 խմ թափուկը տարածքից դուրս է բերվել: Լրացման նպատակով տարածքում տնկվել են հացենու, կաղնու, ընկուզենու 160, 80 թույայի և 400 հատ տոսախի տնկիներ: Նոր տնկված բույսերը ոռոգվել են դուլներով: Դենդրոպարկի տարածքում կատարվել է խնամքի, ոռոգման աշխատանքներ: Հակահրդեհային նպատակով 26 հա-ի վրա ձեռքով հնձվել է խոտաբույսերը, հավաքվել և տարածքից դուրս են բերվել: Վերանորոգվել է ոռոգման ջրագիծը, առուները մաքրվել, ամրացվել, խորացվել և ուղղվել են: Դենդրոպարկի ամբողջ տարածքում կատարվել է ամենօրյա սանիտարական մաքրման աշխատանքներ և կուտակված աղբը դուրս է բերվել տարածքից և ոչնչացվել:

Նախկին ջերմատան տարածքում ստեղծված տնկարանում կատարվել է մաքրման, չորացած ճյուղերի և տերևների հեռացման, ոռոգման ամիսը 2 անգամ, քաղիան-փխրեցման աշխատանքներ: Հարթեցվել են ճանապարհները:

Վանաձորի << Սարուխանյանի Ժ. անվան>> դենդրոպարկում վարձակալի միջոցներով կատարվել են մաքրման, բաժակակտորի, էտի և խնամքի մյուս բոլոր աշխատանքները: Հարթեցվել և հանքայնացվել են ճանապարհները, ձևավորվել են ծառուղիները: Աշխատանքների կատարման հսկողությունը իրականացվել է մեր մասնագետների կողմից:

<<Ջրվեժ>> անտառապարկում ձմռանը կատարվել է ճանապարհների մաքրում ձյունից, ձյան տեղումներից հետո ձյունից թափ են տրվել մշտադալար ծառերն ու թփերը:

Բուսականությունից մաքրվել են 0,6 հա մակերեսով միջտեղամասային ճանապարհները, իսկ ասֆալտյա ճանապարհը՝ թափուկից: Էտվել և ձևավորվել են շուրջ 5000 հատ տարբեր հասակի ծառեր և թփեր: Էտվել են առավելապես ճանապարհների հարակից ծառաթփերը և պտղատու այգու մշակովի տեսակներ: Փորվել է 4500 փոսեր, հանվել և տնկվել են 4500 տարբեր տեսակի ծառաթփատեսակների տնկիներ, որից 400 հատը հողագնդով: Մաքրվել և ուղղվել

են շուրջ 9000 գծմ առուներ, փորվել շուրջ 3800 բաժակներ և պարարտացվել մոտ 450 ծառեր: Կատարվել են անտառապաթուղոգիական ուսումնասիրություններ, որի արդյունքում հայտնաբերվել են ասպիրակի և ակացիայի լվիճների, խնձորենու ցեցի, պտղակերի, տերևաուլորների, տերևակերների, ոսկերգեզի և սոճու կեղևակեր բզեզի, իսկ հիվանդություններից ծակոտկեն բժավորության, մոնիլիալ և կարմիր այրվածքների, ժանգի, ալրացողի վարակի օջախներ, որոնցում՝ շուրջ 26 հա տարածքի վրա կատարվել է քիմիական և մեխանիկական պայքարի աշխատանքներ: Սոճու կեղևակեր բզեզով վարակված օջախում շուրջ 4 հա տարածքի վրա կատարվել է ծառերի անհատական սրսկման և արմատային համակարգի շրջանով թունաքիմիկատով հողի մշակման աշխատանքներ: Հատվել և հեռացվել են 64 սոճի սովորական տեսակի վարակված և չորացած ծառեր, փայտանյութը մշակվել է, և գոյացած 2,367 խ/մ փայտանյութը պահեստավորվել, իսկ վարակված մասերը և թափուկը տարածքից դուրս է բերվել և այրվել: Հակահրդեհային նպատակներով շուրջ 17 հա տարածքի վրա կատարվել են խոտաբույսերի հնձման, հավաքման և տարածքից դուրս բերման աշխատանքներ: Շուրջ 2 տ կշռով չոր խոտ տեղափոխվել է «Էրեբունի» արգելոց որպես անասնակեր: Ծառապատ տարածքներում երկու անգամ կազմակերպվել են ոռոգման աշխատանքներ: Ոռոգման ջրի ոչ բավարար մատակարարման և բարձր ջերմաստիճանի պայմաններում ոռոգման աշխատանքները կատարվել են ձեռքով՝ ջրատար մեքենայով, ջրի տեղափոխման միջոցով: Ձեռքով ոռոգվել են շուրջ 26000 ծառ ու թուփ՝ հիմնականում խոնավասեր տեսակները և նոր հիմնված անտառ կոլտուրաները: Տնկարանի 2000 ք.մ. տարածքի վրա կատարվել են մաքրման, փորման, քարերի հավաքման և մարգերի պատրաստման աշխատանքներ: Պատրաստված մարգերում տնկվել են 6600 հատ մշակված ուռենու, գիհու, տույայի, տոսախի, ճապոնական սերկևիլենու կտրոններ: Տնկարանում և նոր տնկված տնկիների ոռոգումն իրականացվում է ամիսը երկու անգամ: Անտառապարկի տարածքում կատարվում է ամենօրյա սանիտարական մաքրման աշխատանքներ, որի ընթացքում հիմնականում հավաքվել և դուրս են բերվել այցելուների կողմից թողնված կենցաղային աղբի մնացորդները: Այցելուների շրջանում տարվել է էկոլոգիական և էկոդաստիարակչական աշխատանքներ: Տարածքում փակցվել են

տարատեսակ նախազգուշացնող ցուցանակներ: Վերանորոգվել են ցանկապատի, ոռոգման ցանցի վնասված հատվածները և փականները: Հատվել են Նախարարության թույլտվությամբ 41 չորացած ծառերը, պահեստավորվել է 9.9 խ.մ փայտանյութ: Հատված ծառերի տարածքները մաքրվել են թափուկից և նախապատրաստվել լրացման աշխատանքներ կատարելու համար: Ծառուղիները մաքրվել են բնական վերաճից, խուզվել են բորոյությունները և առանձնյակ թփերը, ձևավորվել են շուրջ 1000 ծառ և թուփ: Հրդեհավտանգ շրջանում պահպանությունը իրականացվել է խստացված ռեժիմով:

Կազմակերպության ենթակայության հիմնարկներում կատարվել են հետևյալ գիտական աշխատանքները

Կազմակերպության գիտության բաժնի կողմից շարունակվում են գիտական աշխատանքները, կապեր են հաստատվել գիտական և գիտակրթական հաստատությունների հետ:

Երևանի պետական համալսարանի և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հետ համագործակցության շրջանակներում ուսանողներն իրենց արտադրական և ուսումնական պրակտիկան անց են կացնում Կազմակերպության ենթակայության տարածքներում:

Ս.թ.-ին Կազմակերպության և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի միջև 2011թ.-ից մինչև 2015թ.-ը կնքված պայմանագիրը, ըստ որի՝ ՀԱԱՀ-ի ուսանողները իրենց ուսումնաճանաչողական պրակտիկան պետք է անցկացնեն Կազմակերպության տարածքում, վերակնքվել է մինչև 2021թ.-ը: Սույն պայմանագրի շրջանակներում հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին իրենց ուսումնաճանաչողական պրակտիկան են անցկացրել Ագրոնոմիական ֆակուլտետի ուսանողները:

2015 թվականին շարունակվել են 2014 թվականի ընթացքում հավաքված բուսաբանական և կենդանաբանական նյութերի որոշման աշխատանքները, որի ընթացքում հավաքված տվյալները մշակվում և նախապատրաստվում են գիտական հոդված հրատարակելու համար:

Այս տարվա հոկտեմբեր ամսին անտառապարկում աշնանային ստուգումների և իրավիճակի գնահատման շրջանականերում նկատվել են Սոճի սովորական (*Pinus sylvestris*) ծառի վարակի օջախներ. ուսումնասիրությունները ցույց են տվել վարակի աղբյուրի սկզբնապատճառը: Կազմակերպության կողմից իրականացվել են միջոցառումներ՝ վարակի կանխարգելման նպատակով, որը արձանագրվել է Կազմակերպության գիտական խորհրդի նիստի ժամանակ: Գիտական խորհրդի մշտական անդամներից բացի հրավիրված են եղել նաև Կենսառեսուրսների կառավարման գործակալության պետ՝ Ա. Զիրոյանը, պետի տեղակալ՝ Հ. Գալոյանը, անկախ մաստագետ կենսաբանական գիտ. թեկ.՝ Ա. Գրիգորյանը, Իջևանի դենդրոպարկի տնօրեն՝ Մ. Սայադյանը:

<<Ջրվեժ>> անտառապարկի սոճու անտառամշակույթների ուսումնասիրության աշխատանքների շրջանակներում արդեն իսկ ուսումնասիրվել են որոշ տարածքներ և կան տվյալներ, որոնց վերլուծությունը ցույց է տալիս, որ անտառապարկում առկա են տարածքներ, որոնք ունեն մեկից բարձր լրիվություն: Այս հանգամանքը օրինաչափ չէ և պայմանավորված է ոռոգմամբ: Այստեղ ընթանում է ինքնանոսրացման գործընթացը, որը առանձնակի գեղեցկություն և բնական անտառի տեսք է տալիս: Անտառապարկի տարածքում տեղադրվել են ութ փորձահրապարակներ, որոնցում կատարվում են ուսումնասիրություններ և տվյալների մշակում: Համապատասխան մասնագետների հետ համագործակցության շնորհիվ փորձ է արվում ստանալ <<Ջրվեժ>> անտառապարկում աճող սոճու բնափայտի խտության և դրանում կուտակված ածխածնի պաշարի վերաբերյալ լաբորատոր տվյալներ: Բնափայտի որոշ նմուշներ փոխանցվել են համապատասխան մասնագետների՝ լաբորատոր փորձարկումների իրականացման և տվյալների ստացման նպատակով: Այս աշխատանքները շատ արդիական են, քանի որ ամբողջ աշխարհում ջերմոցային գազի և հատկապես ածխածնի շարժի վերաբերյալ տվյալները փորձ է արվում դարձնել ավելի

կանխատեսելի:

Կազմակերպության տարածքում գտնվող առանձնացված ցանցավանդակներից մեկում կատարվում են Ծներեկ դաշտայինի (*Asparagus*) կլիմայավարժեցման աշխատանքները, և այդ նպատակով կատարվում է սերմերի հավաք բուսատեսակի վերարտադրության կազմակերպման համար՝ «Ջրվեժ» անտառպարկում բնական աճելատեղ ունենալու նպատակով:

Ս.թ.-ի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին առանձնացված ցանցավանդակից հանվել և վարչական շենքի մոտակայքում են տնկվել գիտական ուսումնասիրությունների նպատակով 2008թ.-ին ցանված հետևյալ ծառատեսակները՝ Արջատխլենի (*Corylus*), Հացենի ամերիկյան (*Fraxinus americana*), Կաղնի ամառային (*Quercus robur* L.):

Կազմակերպության ենթակայության տարածքներից հավաքված հերբարիումի դասակարգման արդյունքում չեն հայտնաբերվել նոր տեսակներ: Որոշ տեսակների որոշման համար անհրաժեշտ են նեղ մասնագետներ, որոնք ցավոք բացակայում են, ինչպես Կազմակերպությունում, այնպես էլ Հանրապետությունում, սակայն աշխատանքները շարունակվում են, որի շրջանակներում համագործակցում ենք Երևանի բուսաբանության ինստիտուտի և ՀԱԱՀ-ի մասնագետների հետ:

Հաշվետու ժամանակաշրջանում կատարվել է հավաքված կենդանաբանական նյութերի մշակում լաբորատոր պայմաններում՝ գույքագրման ցուցակների լրացման համար: Ընդհանուր առմամբ, 2015 թ.-ի ընթացքում ՊՈԱԿ-ի ենթակայության տարածքներից հավաքված նյութերից որոշվել է 164 տեսակ: Նախկինում չգրանցված տեսակներ հայտնաբերվել են «Էրեբունի» արգելոցում, «Որդան կարմիր», «Հանքավանի ջրաբանական» և «Ջերմուկի ջրաբանական» արգելավայրերում: Հայտնաբերվել է ստորև ներկայացված, համապատասխանաբար, 1 ընտանիքի 1 տեսակ, 2 ընտանիքի 3 տեսակ, 7 ընտանիքի 17 տեսակ և 10 ընտանիքի 26 տեսակ:

«Էրեբունի» արգելոց

Ընտանիք Սևամարմիններ – Tenebrionidae

1. Entomogonus clavimanus

<<Որդան կարմիր>> արգելավայր

Ընտանիք Սևամարմիններ – Tenebrionidae

1. Hedyphanes coeruleus
2. Centorus filliformis

Ընտանիք Տերևակերներ – Chrysomelidae

3. Smaragdina bipunctata

<<Հանքավանի ջրաբանական>> արգելավայր

Ընտանիք Գնայուկ բզեզներ - Carabidae

1. Bembidion ellipticocurtum
2. Harpalus serripes
3. Amara cursitans

Ընտանիք Hysteridae

4. Hister quadrimaculatus L.

Ընտանիք Դիակերներ – Silphidae

5. Nicrophorus vespilloides

Ընտանիք Թերթիկաբեղավորներ – Scarabaeidae

6. Anisoplia signata
7. Onthophagus grossepunctatus
8. Homaloplia spirea
9. Protaetia cuprina
10. Anisoplia signata

Ընտանիք Սևամարմիններ – Tenebrionidae

11. Cylindronotus erivanus
12. Cylindronotus femoratus
13. Ectromopsis diteras
14. Opatrum sabulosum

Ընտանիք Փղիկներ - Curculionidae

15. Rhinocyllus conicus
16. Larinus turbatus

Ընտանիք Տերևակերներ – Chrysomelidae

17. Cryptocephalus morae

<<Ջերմուկի ջրաբանական>> արգելավայր

Ընտանիք Գնայուկ բզեզներ - Carabidae

1. Carabus renardi
2. Harpalus serripes
3. Lebia cyanocephala
4. Elaphropus diabrachys

5. *Agonum viridicupreum*

Ընտանիք Սրամարմիններ - Staphylinidae

6. *Olophrum assimile*

7. *Astilbus caucasicus*

Ընտանիք Թերթիկաբեղավորներ – Scarabaeidae

8. *Aphodius obscurus*

9. *Onthophagus sericatus*

10. *Onthophagus amyntas*

11. *Oxythyrea cinctella*

Ընտանիք Սևամարմիններ –Tenebrionidae

12. *Cylindronotus femoratus*

13. *Crypticus quisquilius*

14. *Opatrum geminatum*

15. *Pedinus femoratus*

Ընտանիք Տերևակերներ – Chrysomelidae

16. *Phaedon cochleariae*

17. *Orsodacne cerasi*

Ընտանիք Թարախահաններ - Meloidae

18. *Mylabris variabilis*

19. *Meloe mediterraneus*

Ընտանիք Ոսկեբզեզներ - Buprestidae

20. *Coraeus elatus*

Ընտանիք Երկարաբեղիկներ - Cerambycidae

21. *Phytoecia hirsutula*

Ընտանիք Զատիկներ - Coccinellidae

22. *Adalia bimaculata*

Ընտանիք Փղիկներ - Curculionidae

23. *Cleonus tigrinus*

24. *Cleonus piger*

25. *Ceuthorrhynchus turbinatus*

26. *Baris despici*

Գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու նպատակով ս.թ.-ին իրականացվել են գիտարշավների ՊՈԱԿ-ի ենթակայության տակ գտնվող տարածքներում, որի ընթացքում իրականացվել է միջատների (Insecta, Coleoptera)

հավաք: Ընդհանուր առմամբ, հավաքվել է շուրջ 260 տեսակի պատկանող 1765 նմուշներ, որոնք տեղափոխվել են լաբորատորիա տեսակների ստույգ որոշման համար:

Հավաքվել է նաև 66 թերթ հերբարիում, որը նույնպես տեղափոխվել է լաբորատորիա:

Իրականացվել է որպես մոնիթորինգի օբյեկտ առաջարկված երկարաբեղիկի բզեզների (Dorcadion) ցեղի ներկայացուցիչների հաշվառում՝ ավանդական մարշրուտային եղանակով: Յուրաքանչյուր արգելավայրում կատարվել է 100 մ մարշրուտների երկարությամբ 5-ական հաշվառում, միջին հաշվով հաշվառվել է.

- <<Ջերմուկի ջրաբանական>> պետարգելավայրում՝ *D. Scabricolle sevangense* տեսակի 4 առանձնյակ/ 100 մ:

- <<Հանքավանի ջրաբանական>> պետարգելավայրում՝ *D. nitidum* տեսակի 8 առանձնյակ/ 100 մ:

<<Որդան կարմիր>> արգելավայրում իրականացվել է նաև երկկենցաղների և սողունների հաշվառում՝ 500 մ երթուղիների երկարությամբ: Հաշվառումը կատարվել է 3 անգամ, 27.04.2015-30.04.2015թ.:

Հաշվառման արդյունքներն են.

Կենդանատեսակի անվանումը	27.-30.04.04 (միջինը մեկ երթուղու համար)
<i>Rana ridibunda</i> (լճագորտ)	1
<i>Bufo viridis</i> (կանաչ դդոռ)	6
<i>Natrix tessellata</i> (ջրային լորտու)	3

Կենդանական աշխարհի ներկայացուցիչների կենսունակության առանձնահատկությունները որոշելու, հաշվառման և գույքագրման ցուցակները լրամշակելու, ինչպես նաև Որդան կարմիր հաշվառման նպատակով ս.թ. հոկտեմբեր-նոյեմբերի ամիսներին՝ 28.09-02.10 և 05.10-09.10 իրականացվել են գիտարշավներ դեպի <<Որդան կարմիր>> պետական արգելավայր:

Փորձ է կատարվել հաշվառել Որդան կարմիրը, սակայն երկու գիտարշավների ընթացքում գրանցված միջատների քանակը խիստ սահմանափակ են եղել:

Սեպտեմբերին ստանդարտ երթուղիներում գրանցվել են, համապատասխանաբար, Արագածի տեղամասում՝ 15-ից 30, իսկ Ջրառատում՝ 10-ից 15 միջատ: Հոկտեմբեր ամսին կատարված գիտարշավի ժամանակ հայտնաբերվել են միջատի եզակի առանձնյակներ: Մյուս կողմից, միջատների բազմաքանակ դիակներ դիտվել են (Messor) մրջյունների (որոնք այս սեզոնին սնվում են Որդան կարմիրի հասուն եգերով) մրջյանոցների շուրջը: Կարելի է ենթադրել, որ միջատի առավել ակտիվության շրջանը այս տարի ընկել է սեպտեմբեր ամսվա սկզբին՝ տարվա եղանակային առանձնահատկությունների պատճառով:

Տնօրեն՝

Գ.Սարգսյան

Կատ.

Տ.Օրմանջյան

Ա.Խալաթյան

Ա.Հարությունյան